

Պաշտոնը՝ Հաշվապահ մարդկային ռեսուրսներ բաժնում

Աշխատանքային գործառույթները՝

- Կատարել աշխատավարձերի և այլ հավասարեցված վճարումների հաշվարկները,
- Ստուգել ծառայությունների կողմից ստացված անաշխատունակության թերթիկները, արձակուրդային դիմումները, հաշվարկել և պատրաստել վճարման,
- Կատարել մարդկային ռեսուրսների բաժնի գործունեության և դրա արդյունքների վերլուծություն, կազմել հաշվետվություններ և ներկայացնել ղեկավարությանը,
- Ապահովել ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտեի կողմից սահմանված գործառույթների իրականացում (եկամտային հարկի հաշվեվությունների կազմում, տվյալների բազայի թարմացում և այլ անհրաժեշտ գործառույթներ),
- Վարել խմբի փաստաթղթաշրջանառությունը:
- Ժամանակին և ճշգրիտ կատարել անմիջական ղեկավարի (ղեկավարության)՝ ծառայությանն առնչվող հանձնարարականները,
- Իրականացնել պաշտոնից բխող այլ գործառույթներ:

Ներկայացվող պահանջները՝

- Հաշվապահության կամ ֆինանսների մագիստրոսի աստիճան
- Անգլերենի և ռուսերենի գերազանց իմացություն
- Առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ հաշվապահության կամ ֆինանսների ոլորտում
- Հաղորդակցման և ներկայացման հմտություններ
- Լարված պայմաններում աշխատելու ունակություն

Դիմելու կարգը՝ Բոլոր հետաքրքրված թեկնածուները, ովքեր համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին, կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը hrselection@aia-zvartnots.aero էլ. հասցեին՝ (subject) դաշտում պարտադիր նշելով «Հաշվապահ»: